

## “Ոսկե Միջինի” Կանոնակարգը

- Պահպանեք տարածքի մաքրությունը:** Մաքրությունն պահպանեք Ձեզանից եւ Ձեր գործընկերներից հետո: “Ոսկե Միջին”-ում բոլորը պետք է միմյանց աջակցեն:
- Մի ծխեք:** Դա վնասակար է Ձեր եւ առավել վնասակար Ձեզ շրջապատող մարդկանց առողջությանը: Մի ծխեք նաեւ մուտքի մոտ: Մի նետեք ծխախոտի մնացորդները գետնին, այլ զցեք աղբարկղը:
- Պահպանեք ընկերական մթնոլորտ՝ հիմնված քաղաքավարության, սիրալիրության եւ փոխադարձ հարգանքի վրա:**
- Եղեք լավ ունկնդիր:** Հիշեք, որ ունեք երկու ականջ եւ մի բերան: Ուստի անհրաժեշտ է երկու անգամ ավելի շատ լսել, քան խոսել: Դիտողություններ արեք թեմայի շուրջ եւ կարճ՝ երկու բոլորի ընթացքում (այս նպատակով յուրաքանչյուր սեղանին հատկացված է ավազի ժամացույց): Ուրիշներին եւս հնարավորություն տվեք արտահայտվելու նախքան երկրորդ անգամ խոսելը:
- Արտահայտեք Ձեր մտքերը:** Մի թաքցրեք Ձեր գաղափարները, որպեսզի դրանք օգտակար լինեն նաեւ ուրիշներին:
- Մեծահոգի եղեք Ձեր փոխհարաբերություններում եւ ռեակցիաներում:** Խուսափեք ոչ տեղին մանրախնդրությունից եւ վրիպումներ փնտրելուց:
- Մի ընդհատեք միմյանց:** Կողմնակի զրույցներ մի վարեք ուրիշների ելույթների ժամանակ: Դա քաղաքավարի չէ:
- Մի շեղվեք թեմայից:** Խուսափեք անձնական վիրավորանքներից: Նմանատիպ արտահայտություններ լսելու դեպքում միջամտեք եւ ասացեք. “Եկեք չշեղվանք թեմայից: Լրջորեն վերաբերվենք խնդրին առանց որեւէ անձնավորեցման”: Եթե ցանկանում եք փոխել քննարկման թեման նախապես թույլտվություն խնդրեք:
- Քննարկումը ստեղծագործական, հաճելի եւ արդյունավետ** գործընթաց է: Քննարկման արդյունքը պետք է լինի որեւէ բանի ուսուցանումը, Ձեր կամ ուրիշների մտքերի հստակեցումը, պարզաբանման կարիք ունեցող նոր հարցերի եւ խնդիրների բացահայտումը:
- Ամեն անգամ քննարկում նախաձեռնելուց առաջ.**
  - Հստակեցրեք Ձեզ հատկացված ժամանակահատվածը:
  - Կազմեք քննարկման օրակարգը. ի՞նչ խնդիրներ պետք է քննարկվեն եւ ինչպե՞ս պետք է իրականանա քննարկման գործընթացը:
  - Համոզվեք, որ ունեք քննարկմանն անհրաժեշտ բոլոր փաստերն ու տեղեկությունները: Եթե ոչ, ապա լրացրեք բացփողումները եւ հետաձգեք սովյալ խնդրի քննարկումը:

- Մի վիճեք փաստերի շուրջ: Փաստերի վերաբերյալ վիճաբանությունները չեն կարող լուծվել քննարկման ընթացքում: Դրանք հետազոտման եւ ապացույցների կարիք ունեն:

**11. Հյուրասիրություն** – Սուրճը եւ Թեյը հասանելի են “Ոսկե Միջինում” եւ մասնակիցները ակնկալվում են պայմանական ներդրում կատարել Ներդրումների Արկղ՝ այս ծախսերը հոգալու համար (200դ.): Ակնկալվում է, որ դուք կլվանաք եւ ետ կվերադարձնեք ձեր բաժակը պահարան եւ կմաքրեք սեղանը օգտագործելուց հետո:

**12. Ոսկե Միջինի աշխատակազմը** պատրաստ է օգնելու Ձեզ ցանկացած հարցում: Աշխատակազմին վերաբերվեք հարգանքով: Առաջարկությունները միշտ ողջունելի են:

### **“Ոսկե Միջինի” Խորհուրդը**

“Ոսկե Միջինի” Խորհուրդը նշանակվում է “Առակ 29” Բարեգործական Հիմնադրամի կողմից, որը հանդիսանում է “Ոսկե Միջինի” հովանավորը:

### **Մասնակից կազմակերպություններ եւ անհատներ**

“Ոսկե Միջինում” անցկացվող միջոցառումներին մասնակցելը եւ տարածքի հարմարություններից օգտվելը որոշակի խմբերին եւ անհատներին շնորհված արտոնություն է “Ոսկե Միջինի” Խորհրդի կողմից: Իրավունքների չարաշահման դեպքում տվյալ կազմակերպությունները եւ անհատները կարող են զրկվել այդ արտոնությունից: Մասնակից կազմակերպությունները կարող են օգտվել “Ոսկե Միջինի” հարմարություններից, եթե տեղի համակարգողին (կոորդինատոր) ներկայացնեն գրավոր խնդրագիր՝ իրենց կողմից առաջադրված ժամացուցակով: Տարածքը նախատեսված է մինչեւ 30 հոգու համար: “Ոսկե Միջինի” ցուցակագրող կոորդինատորը (համակարգող) նմանատիպ խնդրագրերին կջանա պատասխանել 2 աշխատանքային օրվա ընթացքում: Յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ բոլոր գործընթացների գրաֆիկները կվերանայվեն համոզվելու համար, որ տարածքն արդյունավետորեն է օգտագործվում:

Առավելությունը կտրվի “Ոսկե Միջինի” Խորհրդի կողմից կազմակերպվող միջոցառումներին:

### **Միջխմբային Քննարկումներ**

“Ոսկե Միջինի” կողմից իրականացվող գլխավոր միջոցառումներից մեկը կլինի **Միջխմբային Քննարկումների** կազմակերպումը: Դրա նպատակը որեւէ թեմայի շուրջ հետաքրքրություն դրսևտրող, սակայն տարբեր խմբերի պատկանող անձանց համախմբումն է: Միջխմբային քննարկումները իրականացվում են միայն հրավերներով: Մասնակից կազմակերպություններն իրենց կողմից քննարկման թեկնածուներ կառաջադրեն: “Ոսկե Միջինի” աշխատակազմը կարող է հրավիրել լրացուցիչ անձանց: Հուսով ենք, որ բացի արդյունավետ քննարկում անցկացնելուց մասնակիցները մասնակիցները հնարավորություն կունենան՝ միմյանց ավելի լավ

Ճանաչելու եւ նոր ընկերական ու գործընկերական հարաբերություններ  
հաստատելու:

### **Սպասքապահարանի Ակումբ**

Անհատները, որ հրավիրված կլինեն դառնալու “Ոսկե Միջինի” անդամներ, կունենան  
իրենց անձնական բաժակը (թեյի կամ սուրճի համար) եւ իրենց հատուկ տեղը  
սպասքապահարանում բաժակի համար: Ժամանակ առ ժամանակ “Ոսկե Միջինի”  
խորհուրդը հավելյալ անհատների կհրավիրի, որոնք ակտիվ էին միջխմբային  
քննարկումների ընթացքում կամ “Ոսկե Միջինի” արժեքների օրինակելի կրողներ են,  
դառնալու Սպասքապահարանի Ակումբի անդամներ՝ նվիրելով նրանց իրենց  
անձնական բաժակը եւ տեղը պահարանում: Ակնկալվում է, որ Սպասքապահարանի  
Ակումբի անդամները հատուկ ջանք կներդնեն մասնակցելու “Ոսկե Միջինի”  
միջոցառումներին եւ կզարգացնեն “Ոսկե Միջինի” միջոցառումներն եւ արժեքները:  
Քանի որ պահարանում տեղը սահմանափակ է, ակնկալվում է, որ Ակումբի  
անդամները կզիջեն իրենց տեղը (նրանք կարող են վերցնել իրենց բաժակը)  
ինքնակամ կամ “Ոսկե Միջինի” Խորհրդի խնդրանքով, այն ժամանակ, երբ կլինեն  
ավելի քիչ հետաքրքրված կամ ակտիվ “Ոսկե Միջինում”: